ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
իրավաբանական ծառայությունների մատուցման վերաբերյալ

08-ը հունվարի 2020թ.
ք. Երևան, Հայաստան

Մի կողմից **«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը** (գրանցման համար՝ 273.120.03023, ՀՎՀՀ՝ 01540062, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ.Հովսեփյան 26), որն այսուհետ կհիշատակվի նաև՝ որպես «Հաճախորդ», ի դեմ գործադիր տնօրեն տիկին Մարգարիտա Գրիգորյանի, և մյուս կողմից **«ՏԵՐ-ՏԱՃԱՏՅԱՆ» իրավաբանական և բիզնես խորհրդատվական փակ բաժնետիրական ընկերությունը** (գործունեության վայրի հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 10), որն այսուհետ կհիշատակվի նաև՝ որպես «Խորհրդատու», ի դեմս հիմնադիր-տնօրեն պարոն Արմեն Տեր-Տաճատյանի, կնքեցին իրավաբանական ծառայությունների մատուցման վերաբերյալ սույն պայմանագիրը՝ ստորև շարադրված պայմաններով:

1. Խորհրդատուն Հաճախորդին կմատուցի իրավաբանական ծառայություններ՝ կապված թիվ ՎԴ/0452/05/19 վարչական գործով (ըստ հայցի Լիանա Կարապետյանի, Սիրանուշ Մուրադյանի դատարան ընդդեմ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի՝ 25.12.2018 թվականի թիվ 46-Լ միջամտող վարչական ակտը վերացնելու պահանջի մասին) ՀՀ վերաքննիչ վարչական դատարանում ներկայացուցչության հետ («Ծառայություններ»):

2. Սույն պայմանագիրը գործում է մինչև Կողմերի պարտավորությունների ամբողջական կատարումը:

3. Ծառայությունները ներառում են համակողմանի խորհրդատվության տրամադրումը, պահանջվող փաստաթղթերի, այդ թվում՝ վերաքննիչ բողոքի պատրաստումը, ինչպես նաև տրված լիազորագրերի հիման վրա Հաճախորդի ներկայացուցչությունը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանում:

4. Ծառայությունները կմատուցվեն ու բոլոր փաստաթղթերը կպատրաստվեն հայերեն լեզվով:

5. Ծառայությունների մատուցման ընթացքում Հաճախորդը Խորհրդատուին կընձեռնի հնարավորություն՝ ծանոթանալու հարցերի նախապատրաստման և պարզաբանման ընթացքին վերաբերվող տեղեկատվությանը և փաստաթղթերին:

6. Ծառայությունների մատուցման ընթացքում Խորհրդատուի ստացած տեղեկատվությունը կհամարվի կոնֆիդենցիալ: Կոնֆիդենցիալ տեղեկատվությունը Խորհրդատուն երրորդ անձանց կտրամադրի միմիայն հաճախորդի գիտությամբ և համաձայնությամբ:

7. Ծառայությունների մատուցման ընթացքում Խորհրդատուի կողմից պարզաբանված հարցերի գծով ստացված տեղեկատվությունը համարվում է Հաճախորդի սեփականությունը, և կարող է Խորհրդատուի կողմից օգտագործվել բացառապես ի շահ Հաճախորդի:

8. Խորհրդատուի կողմից պարզաբանված հարցերի գծով ստացված տեղեկատվությամբ իր գործունեության վերաբերյալ որոշումները Հաճախորդն ընդունում է ինքնուրույն՝ առանց Խորհրդատուի համաձայնության:

9. Անկախ Ծառայությունների փաստացի ծավալից և գործն ըստ էության լուծող դատական ակտի արդյունքից Հաճախորդը Խորհրդատուին կվճարի ֆիքսված վճար 660.000 (վեց հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ, գումարած ավելացված արժեքի հարկ 132.000 (հարյուր երեսուն երկու հազար) ՀՀ դրամ, ընդհանուր՝ 792.000 (յոթ հարյուր իննսուներկու հազար) ՀՀ դրամ:

10. Սույն պայմանագրի կնքումից հետո երկշաբաթյա ժամկետում Հաճախորդը կվճարի 792.000 (յոթ հարյուր իննսուներկու հազար) ՀՀ դրամ որպես կանխավճար: Ծառայությունները կհամարվեն մատուցված ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտը հրապարակելուց հետո: Բոլոր փոխանցումները պետք է կատարվեն հետևյալ հաշվեհամարին՝ «Տեր-Տաճատյան» ԻԲԽ ՓԲԸ, Հաշվեհամար 1930030595270100, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ:

11. Սույն պայմանագիրը կազմված է 2 (երկու) օրինակից՝ յուրաքանչյուրը 2 (երկու) էջ, մեկական օրինակ կողմերից յուրաքանչյուրի համար:

ՀԱՃԱԽՈՐԴ՝	ԽՈՐՀՐԴԱՏՈՒ՝
Մարգարիտա Գրիգորյան	Արմեն Տեր-Տաճատյան